որով հիանալի տեսարան մի կը կազմուի սառուերին հետ խառնուելով՝ որև ակնախտիղ աչքերդ պիտի գոցես։

Դեռ մի ժամ չը վայելեցինք այս անուշ օրը՝ տեսար մի կողմից մշուշը երևաց՝ հետզհետէ տարածուելով զմեզ պատեց՝ այլ ևս մարդ մարդու չէ կարող տեսնել՝ օդը տժգունած՝ մարախուղը ամեն անկիւն տիրապետած է՝ ամեն վայր մշուշի հիւլիներն սառելով ալիւր դարձած բիւրեղի նման գետնին երեսն թափելով ձեան վերայ՝ մի առանձին խաւ կը կազմեն։

Այս դեռ ևս տևէ $^1/_2$ կամ 1 և կամ 2 ժամ՝ տեսար որ հիւսիսային կամ արևմտեան հով մի փչեց՝ ձեան հիւլեներն տեղափոխեց՝ այդ միջոցին խոյս տանք՝ որ մեզ ապաստանարան մի գտնենք՝ վազենք ի տուն՝ եթէ մօտ ենք՝ եթէ դաշտն ենք՝ ուր որ ենք պիտի մնանք տափատի մի փաթաթուելով և կամ ձայն պիտի ձգենք հեռուից՝ որպէս զի քանի երիտասարդներ պատրաստուելով և մահը իւրեանց առաջ առնեն «ով Աստուած՝ դու հասնես» ասելով շտապեն յօգնութիւն՝ վասն զի նուիրական պարտք համարուած է բուք ժամանակին լսած ձայնին հասնիլ՝ թէև բուքը հեղձամահ անելու վտանգն սպառնայ՝ թէև օգնութիւն կանչողն իւր թշնամին ևս լինի՝ անխտիր ձայն տալով՝ ձայնի կողմն պիտի գնայ՝ բքարգելն ևս սպառած ուժերն նորոգելով երկրորդ ձայնի կողմն կըսկսի առաջանալ։ Առաջինը՝—Հաւա՜ր՝ Հա հաւա՜ր՝ Աստուծոյ սիրուն հասէք։ Երկրորդը՝ կը պատասխանէ—«Հա էկա՜յ՝ Հա էկա՜յ»։

«Հա եկան» ինչ փրկարար և գիւթիչ ձայն էր բքարգելի համար՝ նորա յուսակտուր սրտին կեանք ներշնչեց՝ քայ.քայեալ ոսկորները կենդանութիւն ստացան։ «Հա եկայ» բառերուն արժէքն նա միայն կարող էր գնահատել. եթէ դուք ևս բքարգել եղած էք՝ գիտէք գնահատել։

Դու փառք տուր Աստուծոյ՝ որ այդպիսի դժնդակ վայրկենի մէջ չը գտնուիս՝ նաև չը լսես բքահեղձ եղած սիրելի բարեկամաց մահը։

Դեկտեմբեր այս եղանակաւ անցուցինք՝ մտանք Յունվար՝ դարձեալ մեր վիճակ այս է՝ ձիւնը ամպի նման երկրէս կը բարձրացնէ սաստիկ հով՝ թաթառի նման շուրջդ կը պա-